

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի «Գեղի միջնակարգ դպրոց», «Քաջարանի թիվ 5 միջնակարգ դպրոց», «Քաջարանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների կառավարման միացյալ խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ Քաջարանի թիվ 6 հիմնական դպրոցի տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. Բարձրագույն կրթությունը,
3. Ուսումնական հաստատության կառավարման իրավունքը (հավաստագիր):
2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը, այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5. Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2021 թ. հոկտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, Քաջարանի թիվ 6 հիմնական դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա 2021 թ. նոյեմբերի 30-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի թիվ 6 հիմնական դպրոցում, հասցեն՝ Սյունիքի մարզ, Անդրկավան փ. 1 ,2. 10:

Տեղեկությունների համար զանգահարել 093-773-631 հեռախոսահամարին, էլ հասցեն՝ geghi@schools.am: